

ՂԱՐԱՔԱՂԻ ԲԱՐՔԱՌԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԵՐԲՏԵՐԸ

Լ.Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայոց լեզվի պատմական բառագիտության համակողմանի ուսումնասիրությունը մեծապես նպաստում են հայերենի բարբառների տվյալները: Այդ առումով կարևորվում է հատկապես Ղարաբաղի բարբառը՝ տարածքային ընդգրկումով և բարբառախոսների թվով լինելով առաջնայինը:

Եթե բարբառի հնչյունական, ձևաբանական, շարահյուսական և բառապաշարային որոշ հարցեր մանրամասն ուսումնասիրված են¹, ապա նույնը չի կարելի ասել պատմական բառաչերտի վերաբերյալ:

Քննությունը ցույց է տալիս, որ հիշյալ բարբառի բառապաշարի բազմաթիվ միավորներ ուղադրվում են ծագումնաբանական, բառիմաստային, իմաստափոխության և բառակազմության տեսանկյունից: Բնականաբար, պատմական բառաչերտի ուսումնասիրությունը ենթադրում է, առաջին հերթին, բարբառի հնդեվրոպական տարրերի վեր հանումն ու քննությունը, ապա՝ գրաբար-բարբառ առնչակցության պարզաբանումը:

1. Ղարաբաղի բարբառի հնդեվրոպական տարրերը (գրաբարում չտվանգված բառեր): Լինելով հայերենի՝ որպես հնդեվրոպական լեզուներից մեկի տարածքային տարբերակը, բարբառն, անշուշտ, պահել է հ.-ե. ծագումով բազմաթիվ բառեր՝ զգալի մասը ժառանգելով գրաբարից: Ալ.Մարգարյանի հավաստմամբ հ.-ե. ծագում ունեցող 927 բառերի գրեթե կեսը կենդանի ու գործում է Գորիսի բարբառում²: Բնականաբար, այդ թիվը մեծ կլինի Ղարաբաղի բարբառում նկատի առնելով հենց միայն տարածքային գործոնը:

Փորձենք առանձնացնել հ.-ե. ծագում ենթադրող այն բառերը, որոնք ավանդված չեն գրաբարում կամ գրաբարի համապատասխան միավորի նկատմամբ զրևորում են որոշ ձևակառուցվածքային յուրահատկություններ:

Բարբառային (ոչ միայն Ղարաբաղի բարբառի) այս կարգի միավորների առանձնացման ու քննության գործում աննախադեպ առաջնությունը կապված է ակադեմիկոս Գ.Ջազուկյանի անվան հետ: Այդ հարցին նա անդրադարձել է համեմատական լեզվաբանությանը վերաբերող իր բազմաթիվ աշխատություններում, իսկ «Հայ բարբառագիտության ներածություն» մեծարժեք գրքի մի առանձին գլուխ դարձյալ նվիրված է այդ խնդրին. առանձնացված են՝ այդ կարգի բառերը՝ ստուգաբանություններով, հ.-ե. գուգահեռների և բարբառային ձևերի տարածքային ընդգրկման հղումներով³: Մեկ այլ գրքում, ներկայացնելով հայերենի հ.-ե. արմատների ցանկը, ի տարբերություն Հ.Հաբշմանի և Հ.Աճառյանի, Գ.Ջազուկյանը բերում է նաև բարբառային միավորները:

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1901, Ա. Պոստյան, Հաղորդի բարբառը, Ե., 1965, Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քառաբար, Ե., 1966, Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Ե., 1975 (ի տարբերություն հայ բարբառագիտության մեջ ընդունված կարծիքի Գորիսի և Հարակից շրջանների տարածքային ստորբարակը Ա. Մարգարյանը համարում է ոչ թե Ղարաբաղի բարբառի ենթաբարբառներից մեկը, այլ՝ առանձին բարբառ):

² Եթե չհաշվենք Աճառյանի որոշ մեկնություններ ու ստուգաբանություններ, ապա, ըստ էության, պատմական բառաչերտի ուսումնասիրությունը սկսվել է վերջին ժամանակներս: Այդ գործում մեծ է հատկապես Գ.Ջազուկյանի վաստակը:

³ Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 238:

⁴ Գ.Ջազուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 245-330:

⁵ Գ.Ջազուկյան, Հայոց լեզվի պատմություն (նախագրային շրջան), Ե., 1987, էջ 111-156:

Այդ երկու աշխատանքներից քաղելով Ղարաբաղի բարբառին վերաբերող նյութը՝ ներկայացնենք այն՝:

Այս «մայր, տատ», անգի «բարակ, նիհար», անձող «ածուխ», առոի «հույժ, շատ», արց «հյուսվածքն սկսել», բուլ (սլն) «խմորի գունդ», գոսուել «ծեծել», թալ (բույս է), թոնթորալ «բողոքել, քրթմնջալ», թոռ «թարմ», թակել «ծեծել», լակ «հոտած», լեմ «ատամ», լեմ «լեզվի փառ», լեպո «թաղանթ, թույլ կախված միս», լմլամել «ծամել», լոսվել «մաշվել», լոք «ցատկ», լպզտել «լիզել», ծալուտ «ձայն», կալանչել «ոռնալ», կէտ «մի տեսակ ճանճ», կլմբոս «հարուստ», կլոնդրակ «գնդակ», կնթո «մաշված ավել», կլոնճ «մեծ կտոր, գունդ», կոլոլ «կանաչի գլխազարդի վրա կախված գնդիկ», կուլ «կոկորդ», կոռ «կեռ», կտիտ «կենդանու կղկղանք», կուտիկ «շան ձագ», ճիթ «ողկույզ», ճմիլ «ողորվել», մալանչ «բրդի փաթիլ», մերան, մլալ «ծխալ», մղմող «ցեց», մոլ «ծուր», մորտել «կրծել», մոռ (բույս է), մուգ «մուգ գույն», նան «մայր», շալ «խեղդողի ճյուղ», շեք «լայն քայլ», շիլ «սխալ», շկակել «արագ շարժվել», շղարճ «կտոր», շեռ «բացված ոտքերի միջև թղած տարածություն», ոսի «մի տեսակ փշոտ բույս», պոկել «մաշել, կեղեղ հանել», պող «չհանգած ածուխ», պուպուկ, պուքել «անմիջապես փախչել», սեռ/սեռն «ողնաշար, լեռան թիկունք», սլկհել «սահել», սղալել «կոկել, հարդարել», տարթ «կեղտ, չորացած քակոր», տեի «խմորը թոնրին կպցնելու բարձ», տիլ «տիղմ» տկողին «աղբայակաղին», տնգզել «ծեծել», տորորալ «շարժվել», տուլ (տալ) «աչքը հառել», տուտուլ «հետույք», տրաքել, տնքալ, ցաքատ (գործիք է), ցաքան «հերկը հարթեցնել», ցեռ «կղկղանք», ցեթ «մեզ», ցլեի «շյուղ», ցուփլիկ, «կոկիկ», քերծվիլ, քուլ «շերամատուց», փլալել «ծածկել», քորթիկ «բույսերի բարակ թերթիկ», քծծել «քրքրել», քնթել «փոքրիկ ճյուղերը կտրել»...

Գ. Զահուկյանի երկու աշխատություններից քաղված այս ցանկը, մեր կարծիքով, կարելի է լրացնել: Ներքոհիշյալ բառերը, ամենայն հավանականությամբ Հ.-Ե. ծագում ունեն: Բերենք այդ բանական կարգով և բարբառային տառադարձությամբ: Ագի «մայր, ազգականուհի», գոն «խորք», լեթված «երես առած», խրթիլակ «չնչափող», ծոնը «թոռան որդի», կէփ «պարանի ծայրը անցկացնելու կեռ փայտ», կՕք (տալ) «համոզել», կոնը «թոռան թոռը», հասի «ազգականուհի», չէկէլ «հարվածել», պլլօրը (տանի) (անեծք է), պլլ «գիծ, կուլարար», չավ (անել) «լուր տարածել», սրլեթա «երես առած», սրտ «տեղյակ, իրազեկ», սրհանիլ «հեկալ, չնչասպառ լինել»:

Ազգակցական կապ արտահայտող ագի, ծոնը, կոնը բառերի հնդեվրոպական ծագումը հիմնավորել է Հ. Ասմանզուլյանը: Դօն - հանդես է

⁶ Պահպանել ենք բառերի ուղղագրությունը: Տպագրական ավելորդ դժվարություններից խուսափելու համար համապատասխան հնդեվրոպական ձևերը չենք ներկայացնում. ընթերցողը այն կգտնի Գ. Զահուկյանի՝ հիշյալ աշխատություններում: Ձևերտներում նշում ենք բառի մաստնները:

⁷ Յանկում չենք գետնել մի շարք բառեր, որոնք հաճախական են նաև այլ բարբառներում (ապի «հայր», պուլիկ, բլբլալ, խլլել...), ինչպես նաև այն բառերը, որոնց ստուգաբանությունը և Հ.-Ե. գուղաչեռը կասկածելի է [սքառած, սարել, բլլ «հարբած»: Վերջինիս համար ավելի հաջնական է պրս. լմլ, «հարբած», քան Հ.-Ե. *լել «երերալ, շարժվել» գուղաչեռը: Ա. Մարգարյանը առառած բառի համար ենթադրում է սուգ առած կապակցությունը (տե՛ս նշվ. աշխ., էջ 470): Չմերժելով այս ենթադրությունը՝ հավանական ենք համարում առառած բառի հնդեվրոպական հավելումով տարբերակը, մանավանդ որ հաճախական է առառած-առառած կապակցությունը:

Վապել, մլմկալ, չլլալ կարելի է համարել բնաձայնություն:

⁸ А. Асмангулян, Некоторые вопросы историко-этимологического изучения терминов-родства армянского языка (Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Ե., 1984, էջ 15 - 29):

գալիս «մըթկէն գօնն ընդնել», «մտքերի մեջ խորասուզվել» կապակցության մեջ: Պրոֆ. Ա.Մարգարյանը գօն-ը համարում է տուն բառը: Սակայն այս զուգահեռը առարկելի է թե՛ հնչյունական, թե՛ իմաստային տեսակետից: Դօն-ը կարելի է աղերսել հ.-ե. *dhunōs* «խորք»-ի հետ: Հոլ. *duin*, ռուս. *дно* «խորք», «հատակ» բարբառային գօն-ի ակնհայտ զուգահեռներ են:

Հասի «ազգականուհի» բառը, որին Հ.Ասմանզույանը չի անդրադարձել, թերևս կարելի է բխեցնել նույն *ag'h* (i)-ձ «ծնող, մայր», արմատից՝ հ-ի հավելումով, հմտ. ագի- հաքի, աներ հանէր, գ-ս հնչյունափոխությամբ: Հաշվի առնելով կոր «ձագ» իմաստը (հմտ. կոր-իւն, խոճ-կոր) և հայերենում կ/ծ լծորդ հնչյունների առկայության փաստը (հմտ. կամակոր-ծամածուռ...) բարբառային կօնը, ծօնը բառերի համար ենթադրում է հ.-ե. **gʷei*, *gʷor* «սերունդ, որդի», կ-ծ ստուգաբանական կրկնակր:

Կէփ «պարանի ծայրին ամրացրած կեռ փայտ» բառի դաք համապատասխանակը դրաբարում վկայված է, իսկ միջին հայերենում էլ հաճախական է: Բարբառում հանդես է գալիս նաև կէփ տալ «պարանը կեռի միջով անցկացնելը» հարադրությամբ: Արմատական բառարանում դաք-ը ստուգաբանված է: Գ.Ջահուկյանը այն բխեցնում է հ.-ե. **xʷaš-* արմատից⁹:

ԿՕք տալ «համոզել, սիրաշահել»: Գրաբարյան գոգ «ասել» բայի արմատն է: Գրաբարում այդ արմատով բայական հարադրություն չկա, չկա նաև բառի բարբառային իմաստը: Ավելին, այն մի հին կորած բայի արմատ է, որ պահպանվել է ապառնիում և հրամայականում. ծագում է հ.-ե. *voğʷh-*ից¹⁰: Կօլ «վիզ» - լատ. *collum* «վիզ, կոկորդ» ակնհայտ զուգահեռ է: Խըրթըրով «կոկորդ, ըմպան», այլ բարբառներում՝ կուրդ, կոտուկ: Վերջինիս համար ենթադրվում է հ.-ե. *gʷ(ə)r-dh*¹¹: Ղարաբաղի բարբառի նշված ձևի համար էլ հավանական է նույն արմատը՝ կ-ի հնչյունափոխությամբ, ըի հավելումով (հմտ. կուզ - կուզիկ, կոկիկ -կօկիկ):

Լէթված/սըլէթա «լիտի, երես առած»: Ղարաբաղի բարբառի նշված համանիշները, անշուշտ, նույնարմատ բառեր են: Գ.Ջահուկյանը բարբառային լի-ստվել, լի-ռտվել բայերի համար նշում է հ.-ե. *al(s)l̥eg* - արմատը: Ղարաբաղի բարբառի համապատասխան բառերն էլ թերևս պետք է բխեցնել նույն հ. -ե. արմատից. բացառելի է **սլէկտա* - սըլէթա, **լէկտ(ված)* - լէթ(ված) անցումը: Չավ (անէլ) «լուր տարածել, հայտնել»: Հաշվի առնելով հայ. քաւ (լիցի) և քրդ. *kāw* տարբերակները՝ Գ.Ղափանցյանը ենթադրում է հ.-ե. *kʷew*, *kʷon*, *kʷu* շարքերը: Ընդունելով բարբառային բառի հնդեվրոպական ծագումը, ի մասնավորի կարելի է տեսնել իրանական աղբյուր՝ հետևյալ փաստարկումով. բարբառում գործածվում է և կվավ բառը՝ կվավ-կվավ (անէլ) «խոսել, ավել-պակաս խոսել» կապակցության մեջ: Կավ և չավ ձևերի մեջ կարելի է տեսնել իրանական լեզուներին բնորոշ *k-č* հնչյունափոխությունը: Պարսկերենում կա *čav* «ձայն, ճովողյուն» (թռչունների համար). եթե այս դեպքում բացառելի է

⁹ Տե՛ս Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1973, № 4, էջ 131:

¹⁰ Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 127:

¹¹ Տե՛ս Հ.Աճառյան, Արմատական բառարան, հ. 1, Ե., 1971: Գոգ արմատը:

¹² Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 129:

¹³ Դ.Капанцян, Историко-лингвистические работы, Е., 1978, с.16.

քնածայրություն հանգամանքը, ապա հօգուտ իրանականի կարող է վկայել պրս. *kāvidan, kaves kardan* «վիճել զուգահեռ»:

Շէկէլ «ուժեղ խփել, հարվածել». պետք է աղերսել Հ.-ե. **(s)kel* «հարվածել, խփել»-ի հետ:

Պըէլ «կովարար, խենթ» հաճախական գործածություն ունեցող բառ է. կա և պըլանալ «կատաղել», պըլթուն» կատաղություն, գոթություն»: Այդ արմատն է պըլանուկ (բույս է խենթացնող բույս): Ենթադրելի է Հ.-ե. **Pel/pol* արմատը, հուն. *πολεμεῖν* «կռվել, վիճել»:

Պըլթոր - առանձին չի գործածվում, այլ որոշակի կապակցություններում. որպես անեծք (պըլթորը պըլատ կէնա, պըլթորը քեզ տանէ...): Հավանաբար Հ.-ե. **bol* «ուռուցք» արմատն է, լատ. *bol* «ուռուցք»: Այդ արմատը գրաբարում առկայանում է պալար բառում:

Մըտ/սէտ «տեղյակ, իրազեկ»: Հանդես է գալիս սըտ ըմ. «տեղյակ եմ», սըտ չըմ «տեղյակ չեմ» ձևերում: Հնարավոր է կապը ստ-ոյգ բառի արմատի հետ: Հավանական է և այն, որ եթե իրոք հայերենում տեղեակ-ը տեղ «վայր» բառի իմաստային զարգացումն է, ապա բարբառային սըտ-ը պետք է բխեցնել Հ.-ե. **sed-lo*-ի հետ, որից հայ. հոգ-տեղ:

Վահր «թարախ» - Հ.-ե. **(s)uer* «թարախոտել, թարախ բռնել»: Հայերենը ծագում է նույն արմատից՝ առանց *S*-ի, որի զուգահեռն է Հին բարձր գերմ. *warah* «թարախ»¹⁴:

Տալ «ճյուղ» - ծագում է Հ.-ե. **dhal(dhel)*-, որից հայերենում դեղ, գալար, գեղ-ձ, դեղ-բ: Բարբառային իմաստի համար ակնհայտ զուգահեռ է հուն. *βάλλω* «ընձյուղ, ճյուղ»:

ՏՀանիլ «հեղուկ, ուժասպառ լինել»: Բառը կարելի է աղերսել խենթ. *tūhāi* «հեղուկ», *tūhāiat* «չնչարգելոց»-ի հետ¹⁵. կարելի է կապ տեսնել նաև Հ.-ե. **ano-ի/հուն. ἀνά, սանակր. anā* «չնչել, գոթ. uz-ana» արտաշնչել¹⁶: Հավանաբար այս արմատից է և բարբառային թանչիլ «հեղուկ»-ը: Հնդեվրոպական այս զուգահեռը արդարանալու դեպքում տՀ(թ)-ն կարելի է դիտել որպես քնածայրության դրսևորում:

Անդրադառնանք բարբառային մի քանի բառերի իմաստային ու գործառական առանձնահատկություններին:

Թակէլ «ծեծել, խփել» բախական. հաճախական է բարբառում: Գրաբարում բայական ձևը չկա, բայց *V* դարից վկայված է Թակ/թակն «ցեց խփելու համար դնդաձև փայտ»: Գոյականական ձևը կա և բարբառում: Բոլլ-բըբ. պմիլ. բարբառային «խմորի գունդ» իմաստը Նոր Հայկազյան բառարանը չի վկայում: Կէտ (մեղվի մեծությունամբ մի ճանճ է): Արմատական բառարանի հավաստմամբ առկա է միջին հայերենում: Բարբառում գոյականական ձևին զուգահեռ գործածվում է կէտել, կէտ անէլ «փախչել, վազել» բայը: Սկզբնապես, հավանորեն նեղ իմաստով է գործածվել «կետի խայթոցից փախչել», հետագայում՝ ընդհանրական՝ «փախչել, վազել»:

¹⁴ Է. Ադայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 136 - 137:

¹⁵ Խենթերեն համապատասխան ձևը տե՛ս Գ. Զահուկյան, Հայերենը և Հնդեվրոպական Հին լեզուները, Ե., 1970, էջ 157:

¹⁶ Հ.-ե. համապատասխան արմատը և նրա տարրերը դրսևորումներն ու իմաստները տալիս է Բուզգին: Սակայն նա նշված արմատը կապում է հան «հափշտակել»-ի հետ, որը իրավամբ Աճառյանը մերժում է (տե՛ս Արմատական բառարան, հան արմատը):

Հօսվել «մաշվել»։ - գրաբարում լեսուլ, «մանրել, փշրել»։ Բարբառային իմաստը մի քիչ այլ է։

2. Գրաբարյան ձևերից հին ձևեր։ Խոսքը վերաբերում է բարբառային այն բառերին ու բառաձևերին, որոնք ավելի հարազատ ու անմիջական են ներկայացնում հնդեվրոպական կամ փոխառյալ բառը։ Այս կարգի օրինակներ շատ չեն, բայց կան։

Քոյր բառի բարբառային քրվէր ձևը համապատասխանում է հ.-ե. *sāesor*-ի սեռական հոլովի ձևին¹⁷։

Կէնալ «Հազնել» - բարբառում արմատական ձևով է՝ գեն-կէն։ Այս արմատը առկա է նաև բարբառի այլ եղանակային-ժամանակային ձևերում. կէց տալ «Հազցնել», կէց «Հազնվիր», կէնում ում «Հազնում եմ» և այլն։ Առկա է և գոյականական ձևը՝ կէցք «Հազուստ»։ Գրաբարում գեն արմատը Հանդես է գալիս -գ- նախդրի հետ. գգենուլ, գգեստ։ Հ.-ե. *ves*-ը ս-ի անկումով Հայերենում տվել է գե¹⁸։

Անուն - բարբառային անըմ ձևը նունպես ավելի հարազատ է ներկայացնում հ.-ե. նախածնը/ հմմտ. հսլրս. *nomā*, պրս. *nom*, ֆրանս. *nom*, իտալ. *nome*։

Թէր-թերթ-ի տարբերակն է առանց Թ-ի։ Բարբառային ձևը է հայտ է գալիս տկաթէր «ճականդեղի տերեւ», պխկաթէր «բողկի տերեւ»։

Հ.-ե. *tuṃb*-ից բարբառային թմբրէլը ավելի հին է, քան գրաբարյան թմբելը¹⁹։

Հուսէմը «կզաքիս» - Հստ Աճառյանի ծագում է հին լուսեմն ձևից և այս էլ լուսամն կամ լուսանն նախածնից։

Անգ «անգղ»։ Եթե գրաբարյան անգղ-ը իրոք հ.-ե. ծագում ունի՝ **amk* «թեքել, ծոել» արմատից²¹, ապա բարբառային ձևը ավելի հարազատ է նախածնին, քան գրաբարը։

Պիհիր «բրիչ, բիր»։ Հ.-ե. **bher* ավելի անմիջական է ներկայացնում, քան գրաբ. բիր-ը։

Բացի վերը նշված առանձին օրինակներից, կարելի օրպես հնագույն երևույթ համարել -նի- մասնիկով մի շարք կազմություններ, որոնք գրաբարում չկան։ Նի կրցնէլ «վառել», նի կյալ «կաշել», նի կօկէլ «հարել, կոկել», նի կապէլ «փաթաթել»։

Ձայնդարձի բարբառային որոշ դրսևորումներ էլ, անշուշտ, հին իրողություններ են՝ բանալ-պէնալ, բառնալ-պէռնէլ, բորբ-բէրբէլ, գազան-կէզան, գանգատ-կէնգատ, լեսուլ-լօսել, կաղին-(տ)կողին, շեշտ-շաշտ, շեզել-շաղվել...։

¹⁷ Է. Աղայան, Բարբառային հնագույն տարբերություններ Հայերենում (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1958, № 5, էջ 73)։

¹⁸ Տե՛ս Արմատական բառարան, զգենուլ բառահոգվածը։

¹⁹ Թերթ-Աճառյանը համարում է բնիկ Հայերեն բառ՝ Թ մասնիկով՝ պարզական թեր արմատից, «որը թեև հնից ավանդված չէ, բայց մինչև այսօր էլ գործածական է մի խումբ գավառականների մեջ» (տե՛ս Արմատական բառարան, Թերթ բառը)։ Գ. Ատհուկյանը հիշյալ բառի համար բերում է հ.-ե. **pter*-արմատը։ (Տե՛ս Հայոց լեզվի պատմություն, էջ 144)։

²⁰ Տե՛ս Արմատական բառարան, Թմուր բառահոգվածը։

²¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 412։

²² -նի- մասնիկի գործածություն և բնույթի մասին տե՛ս Ա. Պողոսյան, -նի-մասնիկը և նրա բառակազմական նշանակությունն ու իմաստային առումները Հայերենի բարբառներում (ՊՐՀ, 1974, № 2, էջ 124-144), Լ. Հովհաննիսյան, Ղարաբաղի բարբառում իրանական մի քանի փոխառությունների մասին (ՀՀ ԳԱ Լրաբեր Հասարակական գիտությունների, 1990, № 11, էջ 67)։

Այս կարգի օրինակները, սակայն, չենք կարող անվերապահորեն գրաբարից հին Համարել, քանի որ բարբառային բառերում ձայնավորների հարաբերակցությունը հնդեվրոպական թե գրաբարյան համապատասխանակի հետ հստակ չէ:

Հայտնի է, որ ը-ով սկսվող բառերը Հայերենում ունեն -ե- կամ -ա- նախահավելվածք. արագ- երագ, արեգակ, երակ...: Ինչպես հնդեվրոպական, այնպես էլ բարբառային ձևերը ներկայանում են առանց նախահավելվածի. *rēl-արեգ/արեգակն- բարբառ. ըիքնակ, reg^hOS-երեկոյ - բարբառ. ըուգուն, rām-երամ(ակ), բրբռ- ըամակ:

Այս կարգի օրինակները, որոնք բնավ էլ վերջնական չեն, ինչպես նաև գրաբարում հավանդված հնդեվրոպական ծագմամբ բառերը, որոնց թիվը, անշուշտ, ավելի մեծ է, քան ներկայացրել ենք, բացահայտում են Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերի յուրահատկությունները: Նման բառերի ու բառաձևերի վերհանումն ու քննությունը մեծապես կնպաստի Հայոց լեզվի պատմության, պատմական բարբառագիտության ու բառագիտության մի շարք հարցերի լուսաբանմանը: Նմանօրինակ նյութի քննությամբ կարելի է նորովի լուսաբանել Ղարաբաղի բարբառի կազմավորման բնույթն ու ընթացքը, գրաբար-բարբառ փոխհարաբերությունը, Ղարաբաղի բարբառի՝ այլ բարբառներին նկատմամբ դրսևորող յուրահատկությունները:

Վերջապես, լեզվական նման հարցերի ամբողջական ու համակարգված քննությունը անհերքելիորեն հաստատում է պատմական Արցախի տարածքում վաղնջական շրջանից Հայ տարրի ու Հայոց լեզվի գոյության փաստը:

ДРЕВНЕЙШИЕ СЛОИ ЛЕКСИКИ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА

Լ.Շ.ՕՎԱՆԵՍՅԱՆ

Резюме

Многочисленные лексические единицы карабахского диалекта выявляют интересные семантические, словообразовательные, этимологические факты.

Из многослойной лексики диалекта, с точки зрения исторической лексикологии, важными являются диалектные слова индоевропейского происхождения, не засвидетельствованные в древнеармянском языке. Այս «мать, бабушка», լօլ — «дым», պըկըհէլ «споткнуться», չէկէլ «ударить», а также словоформы, которые являются более древними, чем соответственные параллели древнеармянского языка. Ի.е.*ank — диал. անգ — древ. арм. անգղ, *bheg — պիհիր — բիր, *reguos — ըուգուն — երեկոյ:

Этими языковыми явлениями подтверждается употребление армянского языка на территории исторического Арцаха с наидревнейших времен.